ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-074-27.03.2019-ՊԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-074-27.03.2019-ՊԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով նախատեսվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, այն է՝ «Հրապարակային ծանուցման վճարը» հոդվածում փոփոխություն կատարել: Մասնավորապես, նախատեսվում է բացառություն սահմանել Ջինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) համար՝ հիմնադրամն ազատելով հրապարակային ծանուցման վճարից:

Նախատեսվող լրացման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ հիմ-նադրամը, բացի սոցիալական նշանակությունից, ունի նաև բարոյական, համապետական և համազգային նշանակություն: Վերջինիս գումարները գոյանում են աշխատող մարդկանց պարտադիր վճարներից և կամավոր նվիրատվություններից, իսկ հիմնադրամի աշխատանքները կատարվում են հասարակական, անվճար հիմունքներով:

Այս առումով, անդրադառնալով օրենքի նախագծին կից ներկայացված հիմնա-վորմանը, նախևառաջ հարկ ենք համարում նշել, որ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց ***կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված*** և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, ***որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:***

Նշված կարգավորումից պարզ է դառնում, որ քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծվում և սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական,

գիտական, առողջապահական, բնապահպանական և այլ հանրօգուտ նպատակներ է հետապնդում ոչ միայն հիմնադրամը, այլև՝ ոչ պակաս կարևոր, սոցիալական, բարեգործական համապետական և համազգային նշանակություն ունեցող այլ հիմնադրամներ: Այս առումով, կարծում ենք, ճիշտ չէ տարբերակված մոտեցման ցուցաբերումը համանման սոցիալական առաքելություն իրականացնող հիմնադրամների նկատմամբ: Նման մոտեցումը կհակադրվի նաև «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված՝ հրապարակային ծանուցման վճարների հիմնական սկզբունքներին և ընդհանուր կարգավորումներին:

Բացի դրանից, նկատի ունենալով հիմնադրամի ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրները, ինչպես նաև նախորդ տարիների հրապարակային ծանուցման վճարների չափը, գտնում ենք, որ հիմնադրամի հրապարակային ծանուցման տարեկան վճարը շոշափելի ազդեցություն չունի վերջինիս բյուջեի վրա:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹ

10 մայիսի 2019 թվականի N 522 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-074-27.03.2019-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 10
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-074-27.03.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-129-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը «կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված դեպքերի,» բառերից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ.

«ինչպես նաեւ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի, »:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ինչպես ամեն հիմնադրամ, այնպես էլ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը» Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, յուրաքանչյուր տարի պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին: Կայքում հրապարակային ծանուցման տեղադրման համար մատուցվող ծառայության համար գանձվում է վճար յուրաքանրյուր հրապարակած նիշի համար: Քանի որ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը» բացի սոցիալական նշանակությունից ունի նաեւ բարոյական, համապետական եւ համազգային նշանակություն, Հիմնադրամի գումարները գոյանում են աշխատող մարդկանց պարտադիր վճարներից եւ բազմաթիվ այլ մարդկանց կամավոր նվիրատվություններից, Հիմնադրամի ամբողջ աշխատակազմը կատարում է աշխատանքները հասարակական, անվճար հիմունքներով եւ անշահախնդիր՝ սույն օրենսդրական կարգավորումով առաջարկվում է հիմնադրամի տարեկան հաշվետվությունները հրապարակել անվճար հիմունքներով՝ սահմանելով այն որպես բացառություն, ինչպես գործող օրենքով նախատեսված է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների համար, չէ որ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը» իրականացնում է, ըստ էության, պետական գործառույթ: